

**5.5. Շրջակա բնական միջավայրի աղտոտվածության վերահսկողության մոնիտորինգ**

**5.5.1. Օդային ավազանի վիճակի վերահսկողություն:** Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության շրջակա բնական միջավայրի աղտոտվածության վերահսկողության մոնիտորինգի կենտրոնի տրամադրած ամսական տեղեկագրերի, 2001թ. հունվար-մարտին մթնոլորտի աղտոտվածության վիճակի հսկողություն է իրականացվել Երևան, Արարատ, Ալավերդի, Վանաձոր, Գյումրի և Հրազդան քաղաքներում տեղակայված 11 մշտական լաբորատոր դիտակայանների միջոցով: Կատարվել է մթնոլորտային օդի 7902 փորձանմուշների փորձազննում, որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ածխածնի օքսիդի, ազոտի օքսիդի և երկօքսիդի, քլորի, քլորոպրենի և արոմատիկ ածխաջրածինների պարունակությունները: Գերազանցվել են վերահսկվող մթնոլորտային աղտոտիչ նյութերից 4-ի պարունակության առավելագույն սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները (ՍԹԿ): Վերահսկվող աղտոտիչ նյութերի բարձր աղտոտվածության (ՍԹԿ գերազանցում 10 և ավելի անգամ) դեպք չի արձանագրվել:

- Երևանում տեղակայված 5 դիտակայանից գործել են 3-ը: Քաղաքի մթնոլորտի աղտոտման հիմնական աղբյուրներն են ավտոտրանսպորտը, արդյունաբերական օբյեկտները, ՋԷԿ-ը, կաթսայատները: Տեխնիկական պատճառներով ածխածնի օքսիդի և ֆորմալդեհիդի պարունակության չափումներ չեն կատարվել: Կատարվել է մթնոլորտային օդի 3148 փորձանմուշների 3531 փորձազննում: Փորձանմուշներից 668-ում կամ 21.2%-ում արձանագրվել է փոշու և ազոտի երկօքսիդի առավելագույն ՍԹԿ-ի գերազանցում:

**Վերահսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաների գերազանցումները ք.Երևանի մթնոլորտում**

Աղտոտիչ նյութերի անվանումը		Կոնցենտրացիաները, մգ/մ <sup>3</sup>			ՍԹԿ գերազանցումները, անգամ		
		հունվար	փետրվար	մարտ	հունվար	փետրվար	մարտ
Փոշի	առավելագույն	1.6	1.6	1.6	3.2	3.2	3.2
	միջին ամսական	0.7	0.4	0.5	4.7	2.7	3.3
Ծծմբի երկօքսիդ	առավելագույն	0.27	0.18	0.25	-	-	-
	միջին ամսական	0.11	0.1	0.11	2.2	2.0	2.2
Ազոտի երկօքսիդ	առավելագույն	0.23	0.25	0.29	2.7	2.9	3.4
	միջին ամսական	0.11	0.1	0.12	2.7	2.5	3.0
Բենզոլ	առավելագույն	0	0.209	0.255	-	-	-
	միջին ամսական	0	0.085	0.138	-	-	1.4

- Արարատ քաղաքում մթնոլորտի աղտոտման հիմնական աղբյուրը ցեմենտի արտադրությունն է: Քաղաքում մշտապես գործող մեկ դիտակայանի միջոցով 2001թ. հունվար-մարտին վերցվել է փոշու պարունակության որոշման 184 փորձանմուշ: Ըստ փորձազննման արդյունքների, փորձանմուշներից 67-ում կամ 36.4%-ում արձանագրվել է ՍԹԿ-ի գերազանցում: Փոշու առավելագույն ՍԹԿ-ի ամենաբարձր գերազանցում գրանցվել է մարտ ամսին՝ 4.7 անգամ և կազմել 1.4 մգ/մ<sup>3</sup>, իսկ միջին ամսական ՍԹԿ-ի ամենաբարձր գերազանցում հունվարին՝ 5 անգամ և կազմել 0.5 մգ/մ<sup>3</sup>:

- Ալավերդի քաղաքում տեղակայված 2 մշտական դիտակայանների միջոցով որոշվել են փոշու, ածխածնի օքսիդի, ծծմբի և ազոտի երկօքսիդների պարունակությունները մթնոլորտում: Վերցված 1575 փորձանմուշներից 58-ում կամ 3.7%-ում արձանագրվել է ծծմբի և ազոտի երկօքսիդների առավելագույն ՍԹԿ-ի գերազանցում: Ծծմբի երկօքսիդի առավելագույն և միջին ամսական ՍԹԿ-ների ամենաբարձր գերազանցում գրանցվել է փետրվար ամսին՝ համապատասխանաբար 2 և 4.2 անգամ և կազմել 0.99 մգ/մ<sup>3</sup> և 0.21 մգ/մ<sup>3</sup>: Ազոտի երկօքսիդի առավելագույն ՍԹԿ-ն գերազանցվել է 1.1 անգամ և կազմել 0.09 մգ/մ<sup>3</sup>:
- ք.Վանաձորում տեղակայված 3 դիտակայանների միջոցով վերցվել է մթնոլորտային օդի 2566 փորձանմուշ, որոշվել են փոշու, ածխածնի օքսիդի, ծծմբի և ազոտի երկօքսիդների պարունակությունները: Փոշու և ծծմբի երկօքսիդի միջին ամսական ՍԹԿ-ները գերազանցվել են համապատասխանաբար 1.3 և 1.4 անգամ և կազմել 0.2 մգ/մ<sup>3</sup> և 0.07 մգ/մ<sup>3</sup>: Հունվարին և փետրվարին ածխածնի օքսիդի առավելագույն ՍԹԿ-ն գերազանցվել է 1.2 անգամ և կազմել 6 մգ/մ<sup>3</sup>:
- Գյումրի քաղաքում տեղակայված մեկ դիտակայանի միջոցով 2001թ. հունվար-մարտին վերցվել է փոշու կոնցենտրացիայի որոշման 213 փորձանմուշ: Առավելագույն ՍԹԿ-ի ամենաբարձր գերազանցում գրանցվել է մարտին՝ 4.8 անգամ և կազմել 2.4 մգ/մ<sup>3</sup>, իսկ միջին ամսական ՍԹԿ-ի ամենաբարձր գերազանցում փետրվարին և մարտին՝ 4.7 անգամ և կազմել 0.7 մգ/մ<sup>3</sup>:
- Հրազդան քաղաքում տեղակայված մեկ դիտակայանի միջոցով վերցվել է օդի 216 փորձանմուշ, որոնց մեջ որոշվել է ցեմենտի փոշու կոնցենտրացիաները: Փոշու առավելագույն ՍԹԿ-ի ամենաբարձր գերազանցում գրանցվել է հունվարին և մարտին՝ 1.7 անգամ և կազմել 0.5 մգ/մ<sup>3</sup>: Միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 2 անգամ և կազմել 0.2 մգ/մ<sup>3</sup>:

**5.5.2. Սակերևութային ջրերի մոնիտորինգ:** Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության շրջակա բնական միջավայրի աղտոտվածության վերահսկողության մոնիտորինգի կենտրոնի տրամադրած ամսական տեղեկագրերի, 2001թ. հունվար և փետրվար ամիսներին հանրապետության մակերևութային ջրերի որակի հետազոտման նպատակով փորձանմուշներ են վերցվել միայն Դեբեդ գետից: Վերցված 12 փորձանմուշներում կատարվել է ջրերի 19 աղտոտիչների պարունակության կոնցենտրացիաների որոշման 228 փորձազննում: Գերազանցվել է միայն միտրիտ իոնների ՍԹԿ-ն՝ 2-4 անգամ:

Մարտ ամսին փորձանմուշներ են վերցվել Դեբեդ, Հրազդան, Քասախ, Սևջուր, Ազատ, Գետառ գետերից և Երևանյան լճից: Վերցված 14 փորձանմուշներում կատարվել է ջրերի 29 աղտոտիչների պարունակության կոնցենտրացիաների որոշման 407 փորձազննում, իսկ 6 փորձանմուշներում՝ 19 աղտոտիչների 114 փորձազննում: Ամոնիումի իոններով բարձր աղտոտվածություն դիտվել է Հրազդան գետում, ՍԹԿ-ն գերազանցվել է 10.7 անգամ: Ազատ, Սևջուր և Գետառ գետերում ամոնիումի իոնների ՍԹԿ-ն գերազանցվել է 2-3 անգամ: Նիտրիտ իոններով բարձր աղտոտվածություն դիտվել է Երևանյան լճում, որտեղ ՍԹԿ-ն գերազանցվել է 10 անգամ, իսկ բոլոր գետերում ՍԹԿ-ն գերազանցվել է 2-5 անգամ: Պղնձի իոնների ՍԹԿ-ն վերցված բոլոր փորձանմուշներում գերազանցվել է 6-14 անգամ: ԹԿՊ<sub>5</sub>-ի ՍԹԿ-ն գերազանցվել է միայն Երևանյան լճում՝ 2.7 անգամ: Նավթամթերքի ՍԹԿ-ն Սևջուր, Հրազդան գետերում գերազանցվել է 3.2 անգամ, իսկ Քասախ, Ազատ, Գետառ գետերում՝ 1.6 անգամ: Սուլֆատ իոնի ՍԹԿ-ի գերազանցում գրանցվել է Ազատ գետում՝ 4 անգամ, իսկ մագնեզիում իոնի ՍԹԿ-ի գերազանցում Հրազդան գետում՝ 2 անգամ:

Վերահսկվող մյուս աղտոտիչների կոնցենտրացիաներն եղել են թույլատրելի նորմաների սահմաններում:

**5.5.3. Սևանա լճի մակարդակի մոնիտորինգ:** Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության շրջակա բնական միջավայրի աղտոտվածության վերահսկողության մոնիտորինգի կենտրոնի տրամադրած ամսական տեղեկագրերի, 2000-2001թթ. Սևանա լճի մակարդակի փոփոխություններն ըստ լճի մակարդակի բազային ընդունված միջի (1896.69մ 1997թ. հունվարի 1-ի դրությամբ) ունեցել է հետևյալ պատկերը.

